

## «Յո՞ երթաս», Գևորգ Վարդան

Իրանի իսլամական խորհրդարանը (ԻԻԿ), 2005թ. մարտի 9-ին, դժբազ իր միստի ընթացքում որոշում ընդունեց պետությունից 17 միլիարդ 500 միլիոն դոլար (մոտ երկու միլիոն դոլար) հատկացնել սահմանադրությամբ ճանաչված կրոնական փոքրամասնությունների մշակութային, մարզական և մամուլի գործունեության զարգացմանը:



Վերոհիշյալ գումարից թեև անհայտնաբերված բաժին ընկավ չորս միլիարդ 700 միլիոն դոլար (գրեթե մուսուլմանական ընկերությունների և հարավային իրանական հայրենասիրների համայնքի համագործակցության օգտին): Գևորգ Վարդանին, իսկ վերջինս մոռանալով իր հանգամանքը՝ որպես համայնքի պատգամավոր, հայտնվեց կուսակցականի դերում և սուսիկ փուսիկ, ժողովրդի աչքից թաքցնելով, ստացած գումարը բաժանեց յուրայինների միջև:

3 միլիարդ դոլար կրթական խորհրդին, 500 միլիոն դոլար «Ալիք» օրաթերթին, 200 միլիոն դոլար «Պայման» եռամսագրին, 200 միլիոն դոլար «Հանդես» եռամսագրին, 200 միլիոն դոլար Կարիքավորների օժանդակող մարմնին, 200 միլիոն դոլար էլ իր գրասենյակի ծախսերի համար:

Հարց է առաջանում թե՛ ի՞նչ տրամաբանությամբ է Գևորգ Վարդանը առաջնորդարանի բյուջեից օգտվող ՀՀԿ պաշտոնաթերթ, տպարանատեր, «Ալիք» օրաթերթին, ինչպես նաև «Պայման» ու «Հանդես» եռամսյա թերթերին առատաձեռնորեն բաժին հատկացնում պետական նպաստից, իսկ նույն ժամանակ անտեսության ենթարկում քսանամյա «Արաքս» շաբաթաթերթին, որ մեծ գոհողությունների շնորհիվ ցայժմ պահպանել է իր գոյությունը:

Իհարկե, այստեղ, մենք ոչ միայն մեղադրում ենք Գևորգ Վարդանին ու նրա կուսակցական մուլուցքը, այլ նաև պետական կողմին:

Ի՞նչն է թույլ տալիս պարոն պատգամավորին այսքան գռեհիկ կերպով անտեսել Դաշնակցության չենթարկվող կառույցներին՝ կուսակցական մեղմությունը՝ թե պետական հովանավորությունը: Քանի որ իրականում Գևորգ Վարդանը այս մոտեցումով ոչ միայն անարգում է իր իսկ կոչմանը, այլ նաև մեր համայնքին:

Իհարկե, այստեղ, մենք ոչ միայն մեղադրում ենք Գևորգ Վարդանին ու նրա կուսակցական մուլուցքը, այլ նաև պետական կողմին, որ համայնքի անուճով պետությունից դուրս գրված գումարը ճիշտ և ազնվորեն բաժանելու փոխարեն, գիտակցաբար, հանձնում է քաղաքական որոշ ուղղության տեր մի մարդու, որը դժբախտաբար, անկարող է համայնքի շահերը գերադասել կուսակցականից:

Համայնքի անուճից ու ունեցվածքից շարաշահելն արդեն հասել է գռեհիկ սահմանների, որի մեջ իհարկե, իր կարևոր և անուրանալի դերն է կատարում պետական կողմը: Չարաշահումներ, որոնց հետևանքով մեկ կողմից քաղաքական, նյութական և բարոյական մեծ ծախսեր ու վնասներ է բարդվել ու դեռ բարդվում համայնքի վրա, փաստը՝ հայոց

→ 8

## Թուրքիայում հայտնաբերվել է Հայոց ցեղասպանության հնարավոր գոհերի զանգվածային գերեզմանը

Թուրք ժամդարմները հրամայել են երկրի գյուղերից մեկի բնակիչներին լռել հոկտեմբերի 17-ին հայտնաբերված զանգվածային գերեզմանոցի մասին, որը կարող է լինել Հայոց ցեղասպանության գոհերի գերեզմանը: Ըստ քրդական Ulkede և

սին Ակարսուլի ոստիկանությանը: Թուրքական բանակի սպաները հրամայել են փակել քարանձավի մուտքը և լռել հայտնաբերված մասունքների մասին: Ընդ որում, նրանք հայտարարել են, թե այդ փաստի վերաբերյալ հետաքննություն կտարվի: Քրդական



Ozgur Gundem թերթի, Քսիրաբեբաբ գյուղի բնակիչները գերեզման են փորելիս եղել իրենց հարազատներից մեկի համար, երբ մի քարանձավ են հայտնաբերել, որ լի էր մոտավորապես 40 մարդու ոսկորներով և զանգեղով: Քսիրաբեբաբայի բնակիչները ենթադրել են, որ հայտնաբերվել են գյուղի մոտ 300 բնակիչների՝ ազգությամբ հայերի գերեզմանները, որոնց սպանել են 1915 թվականին: Նրանք հայտնել են այդ մա-

թերթը հաղորդում է, որ թուրք գինվորականները փործել են քարքարե այդ տեղեկությունը: Լրագրողներին թույլ չեն տվել մտնել քարանձավ: Ձինվորականները նաև արգելել են գյուղի բնակիչներին ցույց տալ քարանձավի ճամապարհը: Մինչդեռ, Սողերտրոն համալսարանի պատմության պրոֆեսոր Դեվիդ Գաունթը գտնում է, որ քարանձավում հայտնաբերվել են մոտակա Դարա (այժմ Օգյուզ) քաղաքից մոտ 150



ԻՐԱՆ-ՏԱՅՆԱՍԱՆ ՓԱՋՏԱՍԱՐԸ ԿԳՈՐԾԱՐԿՎԻ ԱՅՍ ՏԱՐԵՎԵՋԻՆ ...2



ՈՂՁ ԱՅՆԱՐԿԻ ՎԱՅԵՐԸ ԼՊԱՐՏՈՐԵՆ ԸՆՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ «Vive La France!» ...3



ՊԱՏՊԱՍՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆՈՐԻԹՅՈՒՆՆԵՐԸ ...8 ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՋ ...5

հայ և 120 ասորի տղամարդկանց մասունքները, որոնք սպանվել են 1915 թվականի հունիսի 14-ին:

## Նկարահանվում է դարաբաղյան պատերազմի մասին բազմասերիանոց կինոնկար

Հայկական առաջին ակնարկային նկարահանում է բազմասերիանոց գեղարվեստական կինոնկար: Արդեն մեկ ամիս է, ինչ ֆիլմի ստեղծագործական կազմն աշխատում է Արցախում: «Մի վախեցիր» խորագրված ֆիլմը նկարահանվում է գեղարվեստական ստեղծագործության սկզբունքով: Այն չի ներկայացնելու իրական կերպարներ ու իրադարձություններ, սակայն ֆիլմն իրական կյանքի մասին է: Հեղինակները փորձում են հնարավորին հավաստի ներկայացնել 1991-93թթ. պատմական իրողությունը: Նկարահանումները կատարվում են նույն տեղանքներում, որտեղ կազմավորվել են կամավորական ջոկատներ, մղվել կատաղի մարտեր: Նկարահանման հրապարակներում դեռ պահպանվում են

պատերազմի հետքերը: Ֆիլմի գլխավոր հերոսը Արման Արամյանն է, երեկանցի երիտասարդ, որ հանգամանքների բերումով հայտնվում է պատե-

մարմնավորողների դերը: Սփյուռքահայ գինվորի կերպարը մարմնավորում է կանադահայ պրոֆեսիոնալ դերասանը: Նա նկարահանվել է նաև



Րազմական գործողությունների կիզակետում: Ոչ պակաս դժվար ու վտանգավոր է հակառակորդի կերպարը

Ատոմ Էդոյանի «Արարատ» ֆիլմում: Ֆիլմի նկարահանումները նախատեսված է ավարտել հունվարին:

فروشگاه  
تکنو پارشن  
بوس انواع لوازم بخار، آب، گاز

شیرهای فشار شکن، ترموستاتیک، اطمینان، شیرهای برقی، فلکه های بخار، شیر آلات PVC، لوله گیرهای فلزی و لاستیکی، کنترل آلات مکانیکی و الکترونیکی، پنوماتیک و لوازم آمونیاکی و کلیه شیر آلات و اتصالات استنلس استیل در آلیاژهای مختلف

خ خیام شمالی، روبروی پارک شهر، کوچه شهید اکبر رومی، پاساژ ۱۱۰، طبقه اول (بالای همکف)، پلاک ۱ ژوزف - هاملت تلفن: ۳۳۱۱۲۲۵۷ تلفکس: ۳۳۹۲۵۴۳۹

## ԱՐԴԲԵՋԱՆԻՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԸՆՈՒՅՆԵԼ ՅՈՒՆԵՍԿՕ-ԻՑ ԸՆՅԱԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԸԱՍԱՐ

Տարբեր երկրների խորհրդարանների ներկայացուցիչներին և շտաբային պատմաբան, մշակույթի մասնագետից բաղկացած միջազգային պատվիրակությունը Փարիզում հանդիպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Կոչիլիո Մացուրոյի հետ, որից պաշտոնապես պահանջվել է միջազգային հետաքննություն անցկացնել և քննադատել Ազրբեջանի բանակի կողմից Հին Ջուղայի հայկական գերեզմանատան ոչնչացման փաստը: Այդ մասին

PanARMENIAN.Net-ին հայտնել է անկախ ֆրանսիացի լրագրող Փան Էլիյանը:



Պատվիրակությունը կազմվել է Եվեյցարիա-Հայաստան խորհրդարանական խմբի պահանջով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ում Հայաստանի դեսպան Շարլ Ագնա-վուրի աջակցությամբ: Խորհրդարանականները ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին սպառնացել են ներկայացրել, ինչպես նաև ստորագրված Հուշագրեր, որում Ազրբեջանի Համար հինգ Հանձնարարականներ են ներկայացված, որոնց շարքում հայկական գերեզմանի վայրում քրիստոնեական հուշարձանի կանգնեցումը: Եթե Ազրբեջանը չպատասխանի այդ առաջարկներին, պատվիրակության անդամները եվրոպական կառավարություններին, Եվեյցարիայի, Ռուսաստանի և Կանադայի միջնորդությամբ կբարձրացնեն ՅՈՒՆԵՍԿՕ-ից Ազրբեջանի դուրս հանման հարցը:

**«Նյու Յորք Թայմս».**  
**«ԹՈՒՐԵԻԱՆ ՊԵՏՔ Է ՃԱՆԱԶԻ ԻՐ ԱՆՅՅԱԼԻ**  
**ՇԱՆՑԱՆՔՆԵՐԸ, ԲԱՅՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ**  
**ԸՆԴՈՒՆԱԾ ՕՐԻՆԱԳԻԾՆ ԱՆՇԵԹԹ Է»**

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» Ռ/Կ. 17.10.06: Այսօր «Նյու Յորք Թայմս» թերթն իր խմբագրականում անդրադարձել է Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած օրինագծին, որով պատիժ է սահմանվում Հայոց ցեղասպանությունը հերքելու համար:

«Մենք բազմիցս կարծիք ենք հայտնել, որ Թուրքիան պետք է ճանաչի իր անցյալի հանցանքները և դադարեցնի այն գործընթացը, որով զարգացող և զարթոնող ժողովուրդները չեն կարողանում հանդիմանալ իրենց դեմ իրականացվող սպառնալիքներին: Բայց մենք անհեթեթ է գիտնում ենք համարում այն փաստը, որ Ֆրանսիայի Ազգային ժողովը անցած շաբաթ ձայների մեծամասնությամբ ընդունեց մի օրինագիծ, որով, սուգանքի և բանտարկության սպառնալիքով, անօրինական է համարվում պնդելը, թե Հայոց ցեղասպանություն չի եղել», - գրում է թերթը: - «Ֆրանսիայի Սենատը դեռ հնարավորություն ունի դեմ նետել այդ վրդովեցուցիչ օրինագիծը, և հուսով ենք՝ այդպես էլ կանի»:

«Կասկած չկա, որ որքան ավելի շուտ թուրքերը հաշտվեն իրենց անցյալի հետ, այնքան լավ է նրանք սկսում են դա անել: Հիմնականում որովհետև ձգտում են անդամակցել Եվրամիությանը: Դա չի արդարացնում այն ճանապարհը, որով Ֆրանսիացի քաղաքական գործիչները փորձում են շահարկել հակաթուրքական զգացմունքները՝ սիրաշահելով պատկանելի ֆրանսազայ համայնքին», - ասված է խմբագրականում:

Կել հակաթուրքական զգացմունքները՝ սիրաշահելով պատկանելի ֆրանսազայ համայնքին», - ասված է խմբագրականում:

«Այո, Ֆրանսիան մեկն է եվրոպական մոտ մեկ տասնյակ երկրներից, որոնք օրենքներ են ընդունել հրեաների Ողջակիզումը հերքելու դեմ: Ոմանք



փաստարկում են, որ դրանք նույնպես ոտնահարում են արտահայտվելու ազատությունը: Բայց այդ օրենքները գոնե հիմնվում են այն փաստի վրա, որը ներկայացնում են Հիտլերի ռասիստական տեսությունները դավաճող ծայրահեղական հակահեմիթները: Հայկական հարցը Ֆրանսիայի համար փաստի վրա ներկայացնում: Դրա քաղաքական շահարկումը ասօրենականացնում է ոչ միայն Ողջակիզումը, այլև Հայոց ցեղասպանությունը», - եզրափակում է «Նյու Յորք Թայմս»-ը:

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԸՆԴՈՒՆԱԾ ԸՆԴՈՒՆԱԾ**

Հայաստանի Ազգային ժողովը հոկտ. 4-ին իր առաջին ընթերցմամբ ընդունեց Քրեական օրենսգրքի փոփոխություն, որով ցեղասպանությունը հերքելը դառնում է քրեորեն պատժվող արարք:

Քրեական օրենսգրքի նոր հոդվածը կոչվում է «Ցեղասպանությունը և խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը»:

Հոդվածն ազդարարում է, - «Համակարգչային համակարգի միջոցով հանրությանը նյութեր տարածելու կամ որևէ այլ ձևով մատչելի դարձնելու միջոցով ցեղասպանությունը և խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը»:

դություն և մարդկության անվտանգության դեմ ուղղված սույն գլխի մյուս հոդվածներով նախատեսված հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, հավանություն տալը կամ արդարացնելը, եթե դա կատարվել է ռասայական պատկանելիության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման կամ կրոնական պատկանելիության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով՝ պատժվում է սուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

**ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԲՈՅՎՈՏԵԼ ԹՈՒՐԵԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆԸ**

«ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ», 16.10.06: Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միությունը, հաշվի առնելով վերջին օրերին Թուրքիայում սկսված հա-



կաֆրանսիական հիսթերիան և այն հանգամանքը, որ Թուրք ծայրահեղականները բոլորովին են Թուրքիա ներկրվող ֆրանսիական ապրանքը, կոչ է անում հայ երիտասարդներին՝ բոլորովին թուրքական արտադրության յուրաքանչյուր ապրանք: «Մեր միությունն ափսոսանք է հայտնում այն փաստի կապակցությամբ, որ չնայած Թուրքիան վարում է ընդգծված հակահայկական քաղաքականություն՝ փակել է հայ-թուրքական սահմանը և ուրանում է պատմությունը, մեր ժողովուրդը շարունակում է ամեն օր օգտագործել թշնամական ապրանք՝ այդ կերպ զարկ տալով նրանց տնտեսությանը: Միթե՞ մենք մեր մեջ այնքան կամք չենք կարող գտնել, որ վերջնականապես բոլորովին այն, ինչ թուրքական է՝ լինի արևածաղիկ, թե՛ հագուստ», - ասվում է «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միության վարչության հայտարարության մեջ:

**فروشگاه آارات**

فرشده لوازم هیدرولیک پنوماتیک  
 هیدرولیک، پمپ، هیدروموتور، شیر برقی، فشار شکن، مانومتر پنوماتیک واحد مراقبت، جک، شیر برقی، رگلاتور، فلو کنترل، پرشر سوئیچ، پخش لوازم اصلی پنوماتیک کاموزی-ایتالیایی

آدرس: سعدي جنبوی، کوچه علیچور، پاساژ شمس، پلاک ۸

تلفن: ۳۳۹۴۱۸۱۸ - ۳۳۹۷۱۲۷۳

**ԻՐԱՆ-ՇԱՅԱՍՏԱՆ ԳԱԶԱՏԱՐԸ ԿԳՈՐԾԱՐԿՎԻ ԱՅՍ ՏԱՐԵՎԵՐՋԻՆ**

**ՇԱՅԱՍՏԱՆԻ ԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԸ**

Երեկան, 25.10.06, Նոյյան Տալան: Իրան-Ֆայաստան գազատարը կգործարկվի արդեն այս տարի: Այս մասին հոկտեմբերի 25-ին խորհրդարանում հայտարարեց ՀՀ Եներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը: Ըստ նախարարի, գազատարի շինարարության աշխատանքները պետք է ավարտվեն 2007թ.-ի մարտին, սակայն իրանական կողմի հետ փոխ համաձայնությանը որոշվել է աշխատանքները ավարտել ընթացիկ տարում:

Լրագրողների հարցերին ի պատասխան ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգրյանը հերքեց Իրան-Ֆայաստան գազատարը Ռուսաստանին հանձնելու մասին լուրերը: «Մենք վաճառքի մասին չենք խոսում», նշեց նա: Ըստ վարչապետի, Ֆայաստանը կարող է իր կողմից կանոնադրական կապիտալի մեջ ներդրում կատարել, կամ դա անել Ռուսաստանի հետ համատեղ: Նա նշեց, որ երկրում արդեն գործում է «Հայ Ռուսագազարդ»-ը, և անտրամաբանական կլինի միաժամանակ գազի բաշխման երկու ցանց ստեղծել: «Երբ կարողանանք ճնշման տակ դնել խողովակը և գազ ստանալ, այն ժամանակ այդ բնագր-

կումներն ավելի կունկրետ կլինեն», նշեց Ա. Մարգարյանը: Նա հավաստիացրեց, որ գազատարի հետ կապված ռուսական կողմի հետ ցանկացած բանակցության մասին տեղեկացվում է նաև իրանական կողմը:



Նշեց, որ Իրանից Ֆայաստան բնական գազի առաքման վերաբերյալ պայամանագիրը ստորագրվել է 2004թ.-ի մայիսին Երևանում: Ըստ այդ պայամանագրի, Ֆայաստանը Իրանից պետք է ստանա տարեկան 1,1 մլրդ խորանարդ մետրից ոչ պակաս գազ: Պայմանագրի գործողության ժամկետը 20 տարի է: Ներկրված գազի դիմաց Ֆայաստանը վճարելու է էլեկտրոֆայով:

**«Կոմերսանտ».**  
**«ՇԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՔՆ Է ԻՐ ՈՒՆԵՑՎԱԾԸ ԸՆԴՈՒՆԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ»**

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» Ռ/Կ. 31.10.06: «Հայաստանն ինքն է իր ունեցվածքը հանձնում Ռուսաստանին, այդ պատ-

մանով էլ Մոսկվան այնտեղ ներդրումներ կատարելու կարիք չունի», - կարծիք է հայտնել Մոսկվայում լույս տեսնող «Կոմերսանտ» թերթը:



Մեկնաբանելով նախագահ Վլադիմիր Պուտինի այն հայտարարությունը, թե Ռուսաստանի ներդրումները Հայաստանում «ամօթի կերպով տեղում են»՝ օրաթերթը պարզաբանում է, - «Իրականում ներդրումներն ամօթալիքի են, հավանաբար, այն պատճառով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

ինքն է Ռուսաստանին հանձնում իր ունեցվածքը՝ զանազան ծառայությունների, այդ թվում միջնորդական ծառայությունների դիմաց, այնպես որ ներդրումներ կատարելու կարիք էլ առանձնապես չկա»:

Հայտնելով, որ «Գազարդ»-ը ստանձնում է Իրան-Հայաստան գազատարի մի հատվածի վերահսկողությունը, «Կոմերսանտ»-ի հոդվածագիրը փաստում է, - «Համաձայնվում ասել, որ սա վերջին մի քանի տարիների ընթացքում պարոն Պուտինի գլխավոր, եթե ոչ միակ աշխարհաքաղաքական հաղթանակն է այդ տարածաշրջանում»:

**70 ՀԱՋԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՎԱՍՏԱԿՈՒՄ Է ԹՈՒՐԵԱԿԱՆՈՒՄ**

Թուրքիայի արտգործ նախարար Աբդուլա Գյուլն հայտարարել է, որ «հայ-թուրքական սահմանը մեծ հաշվով բաց է»:

«Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում Գյուլն ասել է, որ Թուրքիայում ներկայումս ապրում է աշխատում է 70 հազար հայաստանցի, որոնք իրենց վաստակածն ուղարկում են Հայաստան:

«Բացի այդ, գործում է օրային հաղորդակցությունը», - ավելացրել է արտգործնախարարը:

«Սա քաղաքական հարց է, որը մեծամասամբ կախված է Հայաստանի կառավարությունից», - կարծիք է հայտնել Աբդուլա Գյուլը:



Նոստելով Հայոց ցեղասպանության հետ կապված փաստերն ուսումնասիրելու համար համատեղ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ վարչապետ Ռեջեփ Էրդողանի առաջարկի մասին՝ Թուրքիայի արտգործնախարարը նշել է, - «Մեր վարչապետը դիմել է Հայաստանի նախագահին, սակայն, ցավոք, դրական պատասխան չի ստացել»:

«Բայց հուսով եմ, որ ձեր ղեկավարությունը կրկին կմտածի այդ մասին, և մենք հարցերը կուծենք բարի կամեցողությամբ», - եզրափակել է Աբդուլա Գյուլը:

Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը վերջերս փաստել է, որ Հայաստանը պատասխանել է էրդողանի առաջարկին և փաստորեն «չի ստացել պատասխանի պատասխանը»:

Վերոհիշյալ ասույթը Աբդուլա Գյուլի հետ կայացել է Մոսկվայում, ուր Թուրքիայի արտգործնախարարը մասնակցում էր Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրների արտգործնախարարների երկօրյա հավաքին:

**ՄԻ ՔԱՆԻ ՏՈՂՈՎ...**

Դաշտոնական տվյալներով, 2006թ. հունվար-օգոստոսին նախորդ տարվա համեմատ Ֆայաստանում կատարված հանցագործությունների թիվը աճել է 12.8 տոկոսով. հանցագործությունների թիվը կազմել է 6 հազար 600, որից 117-ը եղել են առանձնապես ծանր:

Ժակ Շիրակի գործընդերքից ցեղասպանության գոհերի նվիրված հուշամատյանում. «Հիշիր»:

Հրանտ Դիմք. «Թուրքիայում ազգայնամոլությունը զարգանում է»:

Վատիկանը պաշտոնապես հաստատել է, որ Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը կայացելի Թուրքիա:

Ֆազարավոր լիբանանահայեր հոկտեմբերի 12-ին Բեյրութում բողոքել են թուրքական խաղաղապահների տեղակայման դեմ: Թուրք խաղաղապահների առաջին խումբը Լիբանան է ժամանել նույն օրերին:

Եվրահանձնաժողովը քննադատել է Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունված օրենքը, որը պատիժ է սահմանում Հայոց ցեղասպանությունը հերքելու համար:

Ռուսաստանում ընդունվել է որոշում, համաձայն որի, ամեն ընտանիք, երկրորդ երեխա ունենալու դեպքում, կստանա ամսական 111 ԱՄՆ դոլար օժանդակություն:

Հանրահայտ System of a Down խմբի երգիչ Սերժ Թանգյանը ողջունել է սեմատոր Ռոբերտ Մենենդեզի կողմից Ռիչարդ Յոզլանգին Ֆայաստանում ԱՄՆ դեսպան նշանակման արգելափակումը մինչև Բուշի վարչակազմը չդադարեցնի Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը:

Իլիան Ալին. «Ապրանքաշրջանառությունը Ադրբեջանի և Ռուսաստանի միջև հասել է 1 միլիարդ դոլարի»:

Թուրքիայի արտգործ նախարար Ֆրանսիայի խորհրդարանը «թուրք ժողովրդին հոգեկան վերք է հասցրել»:

Արարատի գազաթը բարձրանալու համար արտերկրացիներին հարկ կլինի ստանալ թուրքական 8 ստյանների թույլտվությունը:

Գերմանահայ կենտրոնական խորհրդի կողմից աշխատանքներ են տարվում Գերմանիայի միջնակարգ դպրոցների պատմության դասագրքերում ընդգրկել Հայոց ցեղասպանության վերաբերյալ նյութը:

Ըստ Ֆայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ՝ Գագիկ Եգանյանի, 1992 թվականից ի վեր երկրից հեռացել է 900 հազարից մինչև մեկ միլիոն հայաստանցի:

Հոկտեմբերի 28-ին լրացավ Թուրքիայի հայկական «ժամանակ» օրաթերթի հրատարակության 99-րդ տարին:

Դեկտեմբերի 8-ին Lnu Անջելեստուն տեղի կունենա 20-րդ դարի ցեղասպանությունների մասին պատմող կինոնկարի շնորհանդեսը: Ռեժիսոր Կառլա Կարապետյանի «Ճացողները» ֆիլմը, որի ստեղծմանը մասնակցել է նաև System of a Down հայտնի ամերիկահայ խումբը, փորձում է վերլուծել, թե ինչու են տեղի ունեցել ցեղասպանությունները՝ Հայոց եղեռնից մինչև Ռուսոդոն և Դարժուր:

2007 թ.-ի տարեվերջի դրությամբ Ֆայաստանի պետական պարտքը կկազմի շուրջ 1,56 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը ՀՆԱ-ի 19,1%-ն է:

# ՈՂՁ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅԵՐԸ ՀՊԱՐՏՈՐԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆ «Vive La Francel»

Սույն թվի հոկտեմբերի 12-ին, Ֆրանսիայի խորհրդարանի կողմից 106 կողմ և 19 դեմ ձայներով ընդունված Հայոց Ցեղասպանության մեթոդները հանցանք որակող օրինագիծը ավելի շատ թուրքական ժխտողական կառավարության և ֆրանսահայ ակտիվիստների միջև քաղաքական դիմակայության, քան թե խոսքի ազատության խնդիրն է:

Հայոց ցեղասպանության ֆրանսիական արգելքը կկանխի թուրքիայի և Հայաստանի հաշտեցումը և կհետաձգի թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Այլ խոսքով, նրանք դեմ են այս օրինագիծին ելնելով Հայաստանի շահերի հանդեպ իրենց խորը մտահոգությունից:



Այժմ Ֆրանսիայում հաշիվն է Հայաստան-Թուրքիա 4-0: Երեք գոլ խփվեց, երբ 2001 թ.-ին Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը ստորագրեց Հայոց Ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը, այն բանից հետո, որ այն հաստատեցին խորհրդարանն ու Սենատը:

Այն օրերին Թուրքիան փորձեց արգելափակել այդ օրենքը՝ Ֆրանսիային սպառնալով տնտեսական և քաղաքական ճնշմանից: Թուրքերը կանչեցին իրենց դեսպանին Որպեսզի նրան հեզորեն ետ ուղարկեն մի քանի շաբաթից: Նրանք նաև ասում էին, որ կբյուրոստեն ֆրանսիական ապրանքները, սակայն Ֆրանսիայից ներմուծումը 2001թ.-ի 2.3 միլիարդ դոլարից 2005-ին հասավ 5.9 միլիարդ դոլարի: Ֆրանսիացի քաղաքական գործիչները իրավացի էին, որ լուրջ չընդունեցին թուրքական սպառնալիքները: Թուրքական հաշոցը ավելի էր, քան կօժեղ:

Վերջերս դարձյալ նույն սցենարն է հայտ եկավ: Թուրքերը գործի դրեցին միևնույն սպառնալիքները, իսկ ֆրանսիական խորհրդարանը մեկ անգամ հաշիվն առավ դրանք:

Դավիթի և Գողիթի այս մեծամարտում ուժեղ երկիրը անսահմանափակ միջոցներ է ներդրում սուտը քարոզելու համար ընդդեմ հայ ակտիվիստների, որոնք միակ գեները ճշմարտությունն է:

Պարզապես ապշեցուցիչ է, որ բոլոր թուրքերը միաբերան մեղադրում են ֆրանսիացիներին խոսքի ազատությունը ճնշելու համար, երբ հենց, իրենք տարիներով հետապնդել են նրանց, ովքեր համարձակվել են նույնիսկ արտասանել «Հայոց Ցեղասպանություն» բառերը:

Շատ թուրք ղեկավարներ և լրագրողներ անցած շաբաթ փորձեցին մոլորության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը՝ հայտարարելով, թե Ֆրանսիան այս օրինագիծն անտեսում է իր հետ կրթության ամբողջ վստահությունը: Այդ պետական գործիչներից և լրագրողներից ոչ մեկը, որոնք թվում են նաև եվրոպական միության թուրքամետ ապաշտոնյաները, որոնք մեծ պատրաստակամությամբ մեղադրեցին ֆրանսիական խորհրդարանի վարմունքը, պարկեշտություն չունեցան ընդունել հետևյալ հիմնարար փաստերը.

1. Ֆրանսիան և եվրոպական շատ այլ երկրներ տարիներ շարունակ արգելել են հրեաների Հոլոքոստի հերքումը:

2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ասանակել է, որ այդպիսի արգելքը խոսքի ազատության ճնշում է:

Նրանք, ովքեր քննադատում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ ֆրանսիական օրինագիծը, կարծես թե նվազագույն քաջություն չունեն քննադատելու 1990թ.-ին ընդունված նմանատիպ օրենքը, որն արգելում է Հոլոքոստի մեթոդները: Նրանք չունեն որևէ բացատրություն, թե ինչու Հայոց ցեղասպանության գոհերը Հոլոքոստի հրեա գոհերի նման ֆրանսիական օրենքի պաշտպանության արժանի չեն:

Բացի այդ, շատ թուրք ղեկավարներ և եվրամիության պաշտոնյաներ անամոթաբար հայտարարեցին, որ

Նրանք պարզապես փորձում են

խաբել հայերին, որպեսզի հայերը հրաժարվեն իրենց պատմական իրավունքներից հանուն Թուրքիայի հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների:

Ինչպես ակնավոր բրիտանացի լրագրող Ռոբերտ Ֆիսկը հոկտեմբերի 14-ի «Ինդիփենդենթ» հոդվածում է մատնանշում, նման արտահայտություններին համահունչ կլինի, եթե հրեաներին ասեն, թե «այլևս չի խոսվելու հրեաների Հոլոքոստի մասին, թե չէ կհռչակվեն Գերմանիայի և Եվրոպայի հրեաների հաշտեցմանը»:

Թուրքիայի առաջնորդները հասնում են կեղծարարության գագաթնակետին. մի երկիր, որը տարիներ շարունակ խախտել է իր քաղաքացիների անենատարական իրավունքները՝ Ֆրանսիայում ազատության պակասի աղաղակողը եղավ: Ինչպես Աստվածաշունչը մեջբերում է Հիսուսի խոսքերը. «Դու տեսնում ես թո ընկերոջ աչքի փուշը, սակայն չես տեսնում թո աչքի գերանը»:

Թուրքական կառավարությունը կրկին վստահության լուրջ խնդիրներ ունի: Եթե Թուրքիան չիրականացնի Ֆրանսիայի դեմ իր հնչեցրած սպառնալիքները, նա ամբողջ աշխարհում ծաղրի առարկա կդառնա: Ի դժբախտություն թուրքական կառավարության, նրա իրականացրած բոլոր միջոցառումները լուրջ թերություններ ունեն:

Դեսպանի ետևադուրը Ֆրանսիայից: Խնդիր. երբ դեսպանն է վերջը վերադառնա Փարիզ, Թուրքիան կհայտնվի հիմար իրավիճակում, քանի որ նրա ետևադուրը նման կլինի դատարկ ծեստի, որը ոչինչ չի նշանակել:

Ֆրանսիական ապրանքների բյուրոստ: Խնդիր. Թուրքիայում աշխատող ֆրանսիական ընկերությունների արտադրանքի բյուրոստի արդյունքը կլինի տասնյակ հազարավոր թուրք աշխատավորների աշխատատեղերի կորուստը:

Թուրքական ռազմական պայմանագրերի համար բոլոր ֆրանսիական հայտերի չեղյալ համարելը: Խնդիր. Նման պատվերները շահելու համար ֆրանսիական ընկերություններն իրենց մրցակիցների համե-

մատ պետք է առաջարկեն ավելի լավ ապրանքներ ավելի ցածր գներով: Եթե նրանց առաջարկը մերժվի քաղաքական պատճառներով, ապա Թուրքիան ստիպված կլինի ընդունել ոչ ֆրանսիական ընկերության առաջարկած գինը վճարելով ավելի բարձր գին ավելի ցածրորակ արտադրանքի համար:

Բացի այդ, նման բյուրոստերով Ֆրանսիային մեկուսացնելու փոխարեն Թուրքիան իրեն կմեկուսացնի մի հզոր պետությունից, որը մեծ ազդեցություն ունի Թուրքիայի եվրոպական մրցույթի հայտի վրա: Որքան անմիտ է հասարակությանը, որը վերջիվերջո հանրաքվեի միջոցով տանջվելու է, թե արդյոք Թուրքիային պիտանի կլինի միանալ քաղաքակիրթ Եվրոպական ժողովրդների շարքին:

Ֆրանսիայի կողմից Ալժիրի իրականացրած ցեղասպանության վերաբերյալ օրինագիծը ընդունման սպառնալիքը: Խնդիր. Սա պետք է հետհարված տա իրեն Թուրքիայի վրա քանի որ կամրապնդի Հայոց ցեղասպանության վերաբերյալ երկու տասնյակ պետությունների ընդունած բոլոր բանաձևերը և հարցականի տակ կդնի թուրքական պնդումները, թե խորհրդարանները չպետք է օրենքներ ընդունեն, հաստատեն պատմության վերաբերյալ:

Մի խնդիրն էլ այն է, որ Թուրքիան դա իրականացնելով հիմար իրավիճակում կհայտնվի, քանի որ Ալժիրի խորհրդարանն ինքը ֆրանսիային ցեղասպանության մեջ մեղադրելու որոշում չի ընդունել:

Դուրս գալ ՄԱԿ-ի Լիբանանում տեղակայված խաղաղարար ուժերի կազմից, ֆրանսիական հսկողության տակ թուրքական ուժերի տեղակայումից խուսափելու համար: Թուրքական երկրներում:

Ինչպե՞ս շահել դիվանագիտական միավորներ մասնակցելով ՄԱԿ-ի «Լիբանանում խաղաղություն հաստատելու» քանքին, առանց թուրք գինվորներին ֆրանսիական իրանադատությանը ենթարկելու:

Միակ բանը, որ թուրքերը հաջողությամբ են իրականացնում, դա այն է, որ շարունակում են ճնշել իրենց հայ քաղաքացիներին, որոնք որպես պատանդներ, ստիպված են հայտարարություններ անել ֆրանսիական օրենքի դեմ և նույնիսկ ուրանալ, որ իրենց ընտանիքի անդամները ցեղասպանության գոհեր են եղել:

Թուրքերը պարզապես 5 տարով ուշացել են այն ճակատամարտից, որը նրանք տանուլ տվեցին, երբ ֆրանսիական կառավարությունն առաջին անգամ ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրենքը: Այս նոր օրենքն ըստ էության պատիժ է նշանակում (մեկ տարվա բանտարկություն և մինչև 56000 դոլար տուգանք) նրանց համար, ովքեր կխախտեն այն մյուս օրենքը:

Ցանկացած օրենքի չենթարկվելը ունի իր հետևանքները: Ինչո՞ւ այս մեկը պետք է չունենա:

Հայ-թուրքական քաղաքական մրցախաղը դեռ չի ավարտվել: Հույս կա, որ գալիք ամիսներին հայերը մի քանի գոլ էլ կխփեն, երբ Ֆրանսիայի Սենատը քննարկի այս օրինագիծը և ուղարկի այն նախագահին ստորագրելու:

Իսկ մինչ այդ, հարմար տեղավորվեք և հետևեք. թե ինչպես է Թուրքիան ամեն անցնող օր ստորացնում ինքն իրեն: Դուք կարող եք ետ մղել թուրքական բյուրոստը՝ գնելով շատ ֆրանսիական հաց, խմելով շատ ֆրանսիական գինին և ֆրանսիական ոճով համբուրվելով:

Հարութ Սասունյան  
Կալիֆորնիան Կոլորիեր



## ԱԿՏՈՎՅԱՐԻ ԶՈՒ ԴԱՐՁԱՎ ԵՐԳՉՈՒՄԻ ԿԱՐԴՈՒՄԻ ԿԱՐԴԱՆՅԱՆԸ

տանի երգի պետական թատրոնում: Երգչուհին 1996թ.-ին մասնակցել է երիտասարդ կատարողների «Ճալթա-Մոսկվա տրանզիտ» միջազգային մրցույթին, որտեղ լավագույն կատարման համար արժանացել է հատուկ մրցանակի:

1999թ.-ին Վարդուհի Վարդանյանը ճանաչվել է տարվա լավագույն երգչուհի: Նույն թվականին Բելառուսում մասնակցել է «Ձրոտոյ չլազեր» մրցույթին և նվաճել 2-րդ մրցանակը: 2000թ.-ին Բուլղարիայի «Դիսքոլեթ» մրցույթում արժանացել է Գրան պրիի և «Հանդիսատեսի համակրանք» հատուկ մրցանակին: Նույն տարի Մակեդոնիայում կայացած մրցույթում նույնպես Վ. Վարդանյանը արժանացել է Գրան պրիի: Իսկ 2002թ.-ին նա մասնակցել է «Սլավյանակի բազար» միջազգային մրցույթին և արժանացել երկրորդ մրցանակի:

Արվեստաներ հասարակայնությունը երգչուհուն վերջին հրաժեշտը տվեց հոկտեմբերի 18-ին՝ «Արամ Խաչատրյանի» անվան համերգարանում:



նրի մեծ բանակ, իսկ իր ձայնագրությունները մեծ պահանջարկ ունենին Հայկական շուկայում:

## ՄԱՐԱՅԵՆ Է ԱՐԱՄ ԱՍԱՏՐՅԱՆԸ

Երեքշաբթի, նոյեմբերի 7-ի երեկոյան ժամը 7-ի սահմաններում իր հարազատ էջմիածին քաղաքում, որտեղ բնակվում էր Հայաստան վերադառնալուց հետո, սրտի անբավարարության հետևանքով մահացել է ռաբին երաժշտության ամենահայտնի դեմքերից Արամ Ասատրյանը: Նա ուներ Հայաստանում, նաև Միացյալ Նահանգներում և Ավստրալիայում երկրպագու-

## «ԶԿԱՐԹՆՈՑՈՒՄ» ՄԱՏՆԱՎԵՏՔ ԿԿԵՐՑՆԵՆ

«Ա1+», 20.10.06: 2006թ. նոյեմբերի 1-ից «Զվարթնոց» օդանավակայանում գործելու է նոր սահմանված անվտանգության վճար, որը գանձվելու է յուրաքանչյուր մեկնող, տարանցիկ և ժամանող ուղևորների հաշվարկով՝ 2 եվրոյի չափով:



Ահաբեկչության դեմ պայքարի հետ կապված՝ ԻՎԱՕ-ն և մյուս միջազգային ավիացիոն կազմակերպությունները օդանավակայաններին առաջարկել են կիրառել ուղևորների և օդանավերի անվտանգության ապահովման նոր տեխնոլոգիաներ, նշվում է Հայաստանի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պաշտոնական կայքէջում տեղադրված հաղորդագրության մեջ:

Մասնավորապես՝ ուղևորների նույնանվանման նպատակով նոյեմբերի 1-ից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում կիրառվելու են մատնահետքեր կարդացող նոր սարքեր:

## ԱՐԻԲԵՋԱՆՑԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿԱՐԾԻՔ. ՄԵԿ ՇԱՐՎԱԹՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱԶՆԱԳՐԵԼ «ՄԵՐ ՏԱՐԱՆՔՆԵՐԸ»

«PanARMENIAN.Net», 08.11.06: «Ես փստահ եմ, որ եթե Ռուսաստանի կողմից Հայաստանին օգնություն չլինի, ապա ամենաշատը մեկ շաբաթվա ընթացքում ազդեցականության բանակը կարող է ազատագրել օկուպացված տարածքները»: Հայտարարել է ազդեցական օկուպացիայի փորձագետ Ուզեյր Ջաֆարովը Day.az-ին տված հարցազրույցում:


«Այսօր հայերը չափազանց շատ են հերոսականացնում այն, ինչ կատարվել է առաջին զարաբաղյան պատերազմի ժամանակ՝ մոտանալով այն մասին, որ նրանք պարտություններ չըջաններ են ունեցել: Այսօր, նույնիսկ հաշիվ առնելով ազդեցականության բանակի բավականին շատ թերությունները՝ մենք ունենք զորամասեր, որոնք կարճ ժամանակահատվածում կկարողանան կատարել իրենց առջև դրված ռազմական խնդիրը: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ առաջին զարաբաղյան պատերազմի ժամանակ Ռուսաստանն ակտիվորեն օգնում էր Հայաստանին: Առաջին պատերազմից շատ ժամանակ է անցել: Ոչ բավական, սակայն որոշակի աշխատանք է կատարվել», - հայտարարել է Ու. Ջաֆարովը:

«Իսկ ինչ վերաբերում է Հայերի համար ռուսական զենքի ավելի ցածր գնին, ապա պետք է հաշիվ առնել, որ Հայաստանը հանդիսանում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ: Դա նրան հնարավորություն է տալիս ռուսական զենք ձեռք բերել արտոնյալ գնով»: Անդրադառնալով ազդեցականների պարտությունը՝ 90-ականնե-

### ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ԵՂԵՈՆԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱՆԸ ԴԵՌ ԳՏԵՎԱԾ ԶԵ

«ԱԶԳ», 17.10.06: Փարիզի արվարձաններից մեկում գործարկված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը դեռևս չի հայտնաբերվել:

Ըստ «Ֆրանսայրեն» գործակալության, Շափիլ բնակավայրում տեղադրված 300 կգ քաշ ունեցող բրոնզե արձանն անհետացել է Ֆրանսիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ուրացման համար պատիժ սահմանող օրինագծի ընդունումից երկու օր անց: Հուշարձանը Շափիլ քաղաքին հայ համայնքի նվերն էր, որ տեղադրվել էր դեռևս 2002 թվականին, և արժեք 50 հազար եվրո:



### ՎՐԱՆՍ ԴԻՆԵՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ Է ԲՅՈՐՆԱՈՆ ՄՐՑԱՆԱԿԻ



Ստամբուլում լույս տեսնող «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինյան արժանացել է նորվեգական Բյորնսոն մրցանակին՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանության հարցը արձարձելու համար: DPA գործակալու-

թյան վկայությամբ՝ Հրանտ Դինյանը հաճախ է գրել այս հարցի շուրջ, որը վիճահարույց է համարվում Թուրքիայում: Հաղորդագրության մեջ հիշատակվում է, որ 2006 թվականի ամռանը Թուրքիայի վճարված դատարանը ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի որոշումը, որով հայազգի լրագրողը դատապարտվել է պայմանական ազատազրկման: Մրցանակը՝ 15200 գոլդր, Հրանտ Դինյանին կհանձնվի նոյեմբերի 24-ին՝ Մոլդե Ժողովուրդի քաղաքում, ըստ PanARMENIAN.Net-ի հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը:

### «ՎՐԱՄԱՅՎԱԾ Է ՄՊԱՆԵԼ»

Լույս է տեսել Սերգեյ Գալոյանի «Հրամայված է սպանել» գիրքը, որտեղ քննված են Պարույր Սևակի, Մինաս Ավետիսյանի և Վարդգես Պետրոսյանի սպանության հանգամանքները, ներկայացված են նոր փաստեր: Հիշեցնենք, որ Սերգեյ Գալոյանը հեղինակ է քրեական հանցագործությունների և քրեական աշխարհի մասին գրքերի ուղղությամբ: «Հրամայված է սպանել» գրքի տպագրությունից հետո տարբեր մարդիկ հեղինակին են տրամադրել մասնավորապես Պարույր Սևակի ողբերգական մահվանն առնչվող նոր փաստեր, փաստաթղթեր, հուշեր, որոնք Ս. Գալոյանին «պարտադրում» են վերստին անդրադառնալ կատարված ողբերգությանը: Նոր գիրքը գրեթե պատրաստ է, իսկ մինչ նրա լույս




աշխարհ է գալը ընթերցողը կարող է ձեռք բերել Ս. Գալոյանի «Հրամայված է սպանել» ուղղությամբ գիրքը Երևանի «Նոյան տապան» և «Ավասա» գրախանութներում:

### ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՎԱՐԴԱԿՈՎ 168 ՏԵՂԻՑ ԸԱՅԱՍՏԱՆԸ ԳՐԱՎՈՒՄ Է 101-ԲԴԸ

ՄՈՍԿՎԱ, 24.10.06, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մամուլի ազատության մակարդակով աշխարհի 168 երկրների թվում Հայաստանը զբաղեցնում է 101-րդ տեղը, ասվում է «Թղթակիցներ առանց սահմանների» միջազգային իրավապաշտպանական կազմակերպության հետազոտության մեջ: Ռուսաստանը զբաղեցնում է 147-րդ տեղը: Ըստ փաստաթղթի, Ռուսաստանում տեղի է ունենում ՁԱՄ-ների ազատության աստիճանական սահմանափակում՝ անկախ պարբերականների գնում նախագահ Վլադիմիր Պուտինին մոտ կանգնած արդյունաբերական խմբերի կողմից, որոշ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դադարեցում, լրագրողների անպատիժ սպանություն (մասնավորապես, Forbes հանդեսի խմբագիր Պոլ Նյուենիկովի և «Նովայա զագետա»-ի մեկնաբան Աննա Պոլիտովսկայայի):

Սամուլի ազատության հետ կապված գործերի վիճակը ամենավատթա՞րը Հյուսիսային Կորեայում է (168-րդ տեղը), Թուրքմենստանում (167-րդ տեղը) և Էթիոպիայում (166-րդ տեղը): ԱՊՀ մյուս երկրներից 155-րդ տեղում Ուզբեկստանն է: Բելոռուսիան զբաղեցնում է 151-րդ տեղը, իսկ Ուկրաինան Հնդկաստանի հետ կիսել է 105-րդ հորիզոնականը:

Առաջին տեղը ըստ մամուլի ազատության միջանց միջև կիսել են Ֆինլանդիան, Իռլանդիան, Իսպանիան և Նիդեռլանդները, որտեղ չի արձանագրվել զբաղեցում, լրագրողների նկատմամբ սպառնալիքի, հալածանքի և բռնության ոչ մի դեպք: Առաջին 15 տեղերը վարկանշային ցուցակում պատկանում են Եվրամիության երկր-



նիվազեցրել են անցած տարվա համեմատ (51-րդ տեղը): Իսպանիա զբաղեցրել է 19-րդ տեղը, կորցնելով առաջատար դիրքը Մուհամեդ մարգարի ծաղրանկարների հրատարակման շուրջ առաջացած սկանդալի պատճառով:

Մամուլի հասանելիության ցուցանիշ է տեղի ունենում արաբական երկրներում: Լիբանանյան լրատվամիջոցների ռեյտինգը կրկնակի վատացել է լիբանանա-իսրայելական հակամարտության արդյունքում (հինգ տարում 51-րդ տեղից 107-րդը): Մամուլի ազատությունը մյուս մերձավորարևելյան պետություններում նույնպես ցածր է գնահատվել իրավապաշտպանների կողմից, Իսրայելը գտնվում է 135-րդ, Պաղեստինի ինքնավարությունը՝ 134-րդ տեղում:

### ԿՈՉ ԸՈՒՆԱԴԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

/PanARMENIAN.Net/ Հյուսիսային Հայերը մտադիր են ընդգրկել Հայոց ցեղասպանության թեման դասագրքերում: Հյուսիսային ազգային փոքրամասնությունների հարցերով նախարար Ռիտա Վերդոնյանը, որը հայտնի է այլազգիների նկատմամբ իր կարծիք քաղաքականությամբ, Հյուսիսային Հայկական կազմակերպությունների հետ առաջարկում է, որ Հայոց ցեղասպանության թեման տեղ գտնի դասագրքերում և պատժամիջոցներ սահմանվեն ինտերնետային այն կայքերի դեմ, որոնք կժխտեն ցեղասպանության փաստը:

Չոցներ ձեռնարկել ինտերնետ-կայքերում Հայոց ցեղասպանության մերժման, ժխտման և արդարացման դեմ,



Այդ կապակցությամբ Նիդերլանդների հայկական կազմակերպությունների դաշնությունը (FAON) կոչ է արել ներգաղթի և ինտեգրման նախարարին ներառել այս հարցը կրթական ծրագրում, որտեղ օբյեկտիվ նյութերի միջոցով Հոլոքոստի և այլ ցեղասպանությունների հետ միասին կարծարծվի նաև Հայոց ցեղասպանության պատմությունը: Ռ. Վերդոնյանը խոստացել է, որ կփոխանցի FAON-ի առաջարկը իր գործընկերներին կրթական, մշակութային և գիտական հաստատություններին: Բացի այդ, FAON-ի ներկայացուցիչը կոչ է արել Հյուսիսային կառավարությունը որոշակի մի-

ինչպես նաև այն հակերենների դեմ, որոնք փորձում են շարքից հանել հուշարձան և հայկական կայքերը: Ռ. Վերդոնյանը խոստացել է կոչ անել Ինտերնետում խտրականության դժուր հոլանդական բյուրոյին կանխել հայերի հանդեպ խտրականության ցանկացած ձևերը:

### «ԱՊՐԻ ԻՍ ՈՐԴԻՆ, ՆԱ ԶԱՐԱՆԱՅԻՆ ՄՊԱՆԵԼ Է ԸԱՆՈՒՆ ՍԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵՎ ԱԶԳԻ»



2006 թ. փետրվարի 5-ին Տրապիզոնի Սանտա Մարիա կաթոլիկ եկեղեցում կիրակնօրյա ժամերգությունից հետո աղոթքի պահին ատրճանակի երկու կրակոցով սպանվել էր քահանան՝ Անդրեաս Սանտորոն: Ձերբակալված մարդասպանը կանգնել էր դատաստանի առջև: Հոկտեմբերի 9-ին ավարտվել է դատավարությունը: Դատարանը նախ որոշել է ցմահ բանտարկել մարդասպանին, ապա դատապարտել է 18 տարի 10 ամիս ազատազրկման, նկատի ունենալով, որ նա դեռ 18 տարեկան չկա:

Թուրքական մամուլը խուսափում է նշել մարդասպանի անունը, որ դեռևս

հաճախում էր միջնակարգ դպրոց: Սակայն փոխարենը նշում է, որ դատավճռի հրապարակումից հետո նրա մայրը՝ Նեջմինեն լրագրողներին ասել է. «Կեցցե իմ որդին, նա կարող է ոչ միայն 18, այլ 20 տարի բանտարկվել, որովհետև բանտարկվում է մեր պետության և մեր ազգի համար: Նա հանուն Ալլահի է բանտարկվում, հետևաբար չեմ հանդիմանում նրան»: Մարդասպանի ավագ եղբայր Ալին հավելել է իր մտքը. «16 տարեկան երեխային դատապարտում են 18 տարվա բանտարկության: Ողջ-ողջ թաղում են եղբորս: Այս գործը սրանով չի ավարտվելու»:

Արդարությունը պահանջում է ասել, որ թուրքական կենտրոնական թերթերը, մասնավորապես «Հուրիեթը», «Միլիեթը», «Ռադիկալը» և իսլամամետ «Ենի շաֆաքը» խտտագույն դատապարտել են մայր կոչված այս տականքին: Համեմատության կարգով նշենք, որ հակաիրանական պատերազմի օրերին հրեա մայրերն էլ ուղղմաօղային բազա էին տանում իրենց երեխաներին, մակազերելու համար հրթիռների վրա. «Նվեր իսրայելցի երեխաներից լիբանանցի երեխաներին»:

գործակալությունը, Ազրբեջանի բնակչության 51 տոկոսն ապրում է քաղաքներում, 49 տոկոսը՝ գյուղերում: Որոշ զիտորդներ կասկածի տակ են առնում Ազրբեջանի բնակչության թվի վերաբերյալ պաշտոնական տվյալները:

Հոկտեմբերի սկզբին Ազրբեջանի բնակչությունը կազմել է մոտ 8,5 միլիոն մարդ: Այս թիվն հոկտեմբերի 26-ին հրապարակել է Ազրբեջանի պետական վիճակագրական կոմիտեն: Ինչպես հաղորդում է «Թուրքան»

### ԱՐԴԲԵՋԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ Է 8,5 ՄԻԼԻՈՆ

### ԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԱՌԵՐԻ ԱՃԵՍԱՐՎՈՒՄ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կիճակագրության ինստիտուտի տվյալներով, բնակչության մեկ շնչին ընկնող գրադարանային զբոսի քանակով աշխարհի առաջատար 10 երկրները հետևյալն են՝ Վրաստանը՝ 16335 գիրք (1000 բնակչին), Սոմալիան՝ 9781, Լիխտենշտեյնը՝ 4968, Սան-Մարինոն՝ 3704, Իսլանդիան՝ 2831, Գայանան՝ 2295, Եստոնիան՝ 1714, Լյուքսեմբուրգը՝ 1707, Լիտվան՝ 1601 և Մակեդոնիան՝ 1458: Գնտխորհրդային երկրներից Բելառուսը 19-րդն է (667), Մոլդովան՝ 21-րդ (598), Դրոգաուսը՝ 26-րդ (513), Ադրբեջանը՝ 29-րդ (467), Ղազախստանը՝ 41-րդ (249), Ուկրաինան՝ 55-րդ (88) տեղում է: Գամեմատության համար ասենք, որ Իսրայելը 28-րդն է, Մեծ Բրիտանիան՝ 30-րդ, Գերմանիան՝ 31-րդ, Իտալիան՝ 42-րդ, Տիպոնիան՝ 59-րդ, ԱՄՆ-ը՝ 92-րդ: Միջին հաշվով, երկրագնդի 1000 բնակչին ընկնում է 832 գրադարանային գիրք:

Աշխարհի գրադարանների գրադարակների ընդհանուր երկարությունը կազմում է 15 հազ. կմ: Ամենամեծը Ասիայի գրադարաններին է՝ 9 հազ. կմ:

Աշխարհի գրադարաններում առկա են 20 մլրդ գիրք, 1,5 մլրդ միկրոֆիլմ և ավելի քան 10 մլրդ միավոր պարբերական (թերթեր, ամսագրեր և այլն): Գրքերի ամենահարուստ հավաքածուն ունեն Եվրոպայի գրադարանները՝ ավելի քան 16 մլրդ միավոր:



Գրադարանների բաժանորդներ են մոտ 2,5 մլրդ մարդ: Այս առումով ամենաբարձր առաջատարը Եվրոպան է՝ 1,8 մլրդ մարդ: Երկրորդը Ասիան է՝ 215 մլն:

Տարեկան գրադարանները իրականացնում են 1,5 տրիլիոն գործառույթ՝ գրքերի, ամսագրերի, CD-ների տրամադրման համար: Առավել ծանրաբեռնված են աշխատում Եվրոպայի գրադարանները՝ 1,1 տրիլիոն գործողություն, Ասիայի՝ 82 մլրդ:

Bowker ընկերության տվյալներով, 2005թ. Մեծ Բրիտանիայում հրատարակվել է 206 հազար ամուսն գիրք և այս ցուցանիշով անգլիացիները առաջին անգամ վերջին 20 տարվա ընթացքում գերազանցել են ԱՄՆ-ին, որտեղ 2005-ին հրատարակվել է 172 հազ. ամուսն գիրք: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով, մարդկության 82%-ը համարվում է գրագետ: Գրագետ են տղամարդկանց 87%-ը և կանանց 77%-ը: Միայն հինգ երկրներում են բոլոր չափազանց բնակիչները գրագետ՝ Գրեմա Բոնիայում, Նորվեգիայում, Վրաստանում, Լիխտենշտեյնում և Ֆինլանդիայում:

Ներկայումս աշխարհում հաշվվում է 771 մլն անգրագետ, որի երկու երրորդը կանայք են: Ընդ որում, 70մլն անգրագետ են բնակվում բոլոր անգրագետների 34%-ը, իսկ 2հիմաստանում՝ 11%-ը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ»

# Հրիսաաարգական էգ

Էջի պատասխանատու՝ Մ. Հայրապետյան

## ԱՇՆԱՆ ՊԵՍ

**Գ**եղեցիկ ու հիանալի է Աշունը:

Գեղեցիկ են նրա ցուրտ ու մռայլ օրերը՝ անձրևները, դեղին ու խորշոմած տերևները՝ տերևաթափը:

Ուզում եմ ես էլ լինել աշնան պես: Թոթափել ինքս ինձ: Ազատվել գույնզգույն հոգսերից ու խոհերից:

Մի եղանակ ըզմիջում է հարկավոր, որպեսզի կարողանամ, ազատ և արծակ բոլոր խանգարող մտքերից, զգալ թեթևության համը:

Ուզում եմ, պատրաստվել նոր ու գեղեցիկ զգեստներ որոնելու համար: Պետք է այս անգամ հենվելով անցյալիս փորձա-

ռության, ամենայն ուշադրությամբ, որոնեմ այն, որի թե՛ գույնը և թե՛ ինքը հարմարվելու է ինձ: Այն զգեստը, որ հոգեպես բարձրացնելու է իմ կամքը, և իր դիմացկունությամբ, պաշտպանելու է ինձ, ողջ ճանապարհի խոչընդոտներից ու կիզիչ հոգսերից: Այն, որ ցնծություն և երջանկություն է պարգևելու օրերիս:

Փորձում եմ ենթարկվել փոփոխություններին: Ուզում եմ հավատալ ինքս ինձ:

Շտապել պետք չէ, քանզի ամեն տերևաթափից հետո դարձյալ մի նոր գարուն է բացվելու...

**Ինչ ունեցել է ժողովուրդը քո  
Հնում, անցյալում - լուսավոր ու վեհ,  
ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ -  
Ողջը հավաքել և քե՛զ է տվել: -**

**Տվել է, որ դու այդ ամենը այս  
Օրերին խառնած, խոր հավատքով լի՝  
Պարզես գալիքի ցնորքին անհաս -  
Եվ ընդմիջտ մնաս մեծ ու սիրելի: -**

Եղիշե Չարենց




## Շետաքրքիր է իմանալ

### Յոթնօրյա շաբաթ

**Յ**ոթնօրյա շաբաթը օրացույցային հաշվումների կարևոր ու գործնական միավորներից մեկն է, որի գործածությունը շատ հին ծագում ունի: Բացի յոթնօրյա շաբաթից, որոշ ժողովուրդներ տարբեր ժամանակներում կիրառել են հնգօրյա և տասնօրյա շաբաթներ: Շաբաթը յոթ օր հաշվելու մասին կա երկու կարծիք. ա) յոթնօրյա շաբաթը կապված է լուսնի փուլերի հետ, քանի որ նորալուսնից մինչև առաջին քառորդը կամ առաջին քառորդից մինչև լիալուսնի ընկած ժամանակամիջոցը հավասար է 5-7 օրվա, բ) յոթնօրյա շաբաթի

Ուրբաթ՝ Վեներայի (Արուսյակի կամ Լուսաբերի) օր, Շաբաթ՝ Սատուրնի (Երևակի) օր, Կիրակի՝ Արեգակի օր: Մոլորակների անունները կապված են հին հեթանոսական աստվածների անունների հետ:

Արևելյան ժողովուրդները շատ վաղ ժամանակներից շաբաթվա օրերը անվանել են թվարկության հերթականությամբ, այսինքն՝ միաշաբթի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, պարսկի և շաբաթ: Պարսկի նշանակում է նախապատրաստվել, իսկ շաբաթը երբայերեն նշանակում է հանգիստ: Գայերի մոտ պարսկի փոխարեն ընդունված է ուրբաթ, որն առաջացել է ասորերեն «ուրբաթ»՝ նախապատրաստվել բառից:



հասկացողությունը կազմված է յոթ լուսատուների (Արեգակ, Լուսին, Մարս, Յուպիտեր, Սատուրն, Վեներա և Սերկուրի) թվի հետ: Դրա համար էլ արևմտյան և այլ ժողովուրդների մոտ շաբաթվա օրերի անունները կապել են այդ լուսատուների անունների հետ՝ հետևյալ հերթականությամբ. երկուշաբթի՝ Լուսնի օր, երեքշաբթի՝ Մարսի (Հրատի) օր, Չորեքշաբթի՝ Սերկուրիի (Փայլածուի) օր, Հինգշաբթի՝ Յուպիտերի (լուսնթագի) օր,

Շետաքայում, քրիստոնեական գաղափարների տարածման շրջանում, քրիստոնեական եկեղեցին որոշում է միաշաբթի օրը վերանվանել կյուրակե և շաբաթ օրվա փոխարեն այն համարել հանգստի օր, որը կապված է Հիսուս Քրիստոսի հարություն առնելու հետ: Կիրակի հունակալան «կյուրակե» բառն է, որ նշանակում է տերուճակամ:

Քրիստոնեական դավանանքը ընդունած ժողովուրդները հետագայում հանգստի օրը համարել են կիրակին, հրեաները՝ շաբաթ օրը, իսկ մահմեդականները՝ ուրբաթ օրը:

Իհարկե իսլամական աշխարհի որոշ երկրներ եվրոպայի և ընդհանրապես քրիստոնյա երկրների հետ առևտրատնտեսական կապերը ավելի աշխատունակ պահելու համար կիրակի օրն են ընդունում իրենց արձակ օրը:

Թուրքիան 1935 թվականից պաշտոնական հանգստի օրը համարել է կիրակի օրը:

- Իմ կինը շատ համեստ է, նա երբեք ոչ մի բանի մասին ինձ չի խնդրում:  
- Իմ կինը նույնպես միայն հրամայում է:

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարում է կազմել մի ցուցակ, որտեղ պետք է ընդգրկված լինեին երկրի առավել հայտնի տասնմեկ մարդկանց անունները: Որոշ ժամանակ հետո նա կանգ է առնում մի նստարանի առաջ և հարցնում.  
- Արա, դու վերջացրե՞լ ես ցուցակը:  
- Գրեթե, մնում է միայն դարպասապահը:  
- Պողոսիկ, միթե՞ չես խղճում մորդ: Քո ամեն մի անկարգությունը մի նոր սպիտակ մազ է իմ գլխին:  
- Իսկ դու նույն էլ ես, թե որքան սպիտակ մազ կես տատիկի գլխին:



Ձրուցում են հայր ու որդի.  
- Ի՞նչ նոր բան կա դպրոցում:  
- Պատկերացնում ես, հայրիկ, պարզվում է, որ մեր դասատուն շատ նախանձոտ մարդ է:  
- Ինչո՞ւ ես այդպես կարծում:  
- Ահա արդեն քանիներորդ անգամն է, դասարանից ինձ դուրս անելիս ասում է. «Ա՛խ, եթե ես քո հայրը լինեի»:  
☺ ☺ ☺

**ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՆ Է,  
ՈՎ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹԵ ՓՈՐՉԱՆՔ,  
ԱՅԼ ՓՈՐՉԱՌՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՍԱՐՈՒՄ:**

## 55 ԲԱՈԱՆՈՑ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

**Կիթառ**

Նա երբեք իր կիթառի նման ինձ գիրկը չի առնում, տարիներ է ինչ նրա նման ինձ չի շոյում: Կիթառի մեջ կմտնեմ, որպեսզի մեկ անգամ ևս նրա գրկում լինեմ:

Կինը ամբողջ օրն զբաղվեց իր կերպարանքը, ծայրը և իր բոլոր հատկությունները գոհաբերելով, ամեն ինչը, բացի գրկվելու ցանկությունը: Վերջապես, լուռ ու աներևույթ տեղավորվեց գործիքի մեջ ու սպասեց:  
-Սիրելիս, ես եկա, նոր կիթառ եմ գնել, ո՞ւր ես...

Ջոն Մ. Դանիել



### Վերահանդիպում

Դպրոցում աղջիկը տղայի սիրեցյալն էր: Երբ դպրոցն ավարտեցին, տղան ասաց.- խնդրում եմ, կապ պահիր:  
Աղջիկն ասաց.- հաստատ, դու էլ...  
Հինգ տարի հետո նրանք կրկին հանդիպում են միմեանց և խոսում:  
- Ուրախ եմ քեզ տեսնելու համար:  
- Ես էլ նույնպես:  
- Խնդրում եմ, կապ պահիր:  
- Հաստատ, դու էլ նույնպես:  
Դեյվիդ Գաֆան  
Անգլերենից թարգմանեց՝ Նորվալան



**Է**կանքն, այսօր ամենաչնչին պատրվակով իսկ ինձ անակնկալի է բերում, ամենապարզ նշույթով իսկ լուսավորում ճամբաս:

Այսօր, կյանքը նկարչության պարզ մի վրձինով գույնում է ինձ. մի սրիչով առաջում, սրում է բլթա-ցած կողմերս ու բուրավետ մի ուստիով մաքրում վրայիս խղբողները:

\*\*\*

Եթե չես կարող ովկիանոս լինել, ծով դարձիր, եթե ոչ աղբյուր և եթե դա էլ չի լինում մի փոքրիկ սուվակ, բայց, զգուշացիր, երբեք ճահիճ չդառնաս:

Թարգմանեց՝ Սիլվիա

## ՋԱՎԵՆ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԸ ՆՎԱՃԵՑ ԱՃԽԱՐԿԻ ՉԵՄՊԻՈՆՍԻ ԿՈՉՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 16-ին Երևանում ավարտվեց մինչև 20 տարեկան շախմատիստների աշխարհի առաջնությունը: 83 տղաների պայքարում 13 հնարավորից 9,5 միավոր վաստակեց և աշխարհի չեմպիոնի կոչմանը արժանացավ 17-ամյա Ջավեն Անդրիասյանը (Հայաստան): 9-ական միավորով մրցանակային Հաջորդ երկու տեղերը զբաղեցրին, Համապատասխանաբար,



